

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

**ԼՀԴ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԵԾԱՍԱՄՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ Թ.Թ. 10 ԵՎ 15 ԸՆՏՐԱՏԱՄԾՔՆԵՐՈՒՄ ԼԸԱՑՈՒՑԻՉ
 ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
 Ընտրությունների օրը` 2012թ. դեկտեմբերի 23-ը**

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողը	Ծանոթություն
1	2	3	4	5
1.	Դիտորդների հավատարմագրումն իրականացվում է. քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ	մինչև 2012 թ. դեկտեմբերի 13 -ը	ԿԸՀ	
2.	Մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուներին եթերաժամ տրամադրող հեռուստառադիոընկերությունները (անկախ սեփականության ձևից) իրենց վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը հրապարակում են. ընտրության նշանակումից ոչ ուշ, քան 10 օր հետո	մինչև 2012 թ. հոկտեմբերի 15 -ը	Հեռուստառադիո-ընկերություններ	
3.	Քվեարկության օրվա, տեղի և ժամանակի մասին ընտրողները ծանուցվում են. ԱԺ մեծամասնական ընտրակարգով ընտրություններ նշանակելուց հետո, բայց ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 3 օր առաջ	մինչև 2012 թ. դեկտեմբերի 20 -ը	Լիազոր մարմին կամ նրա համապատասխան ստորաբաժանում	
4.	Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) մշտապես գործող մարմնի որոշումը (դաշինքի անդամ կուսակցությունների մշտապես գործող մարմինների վավերացրած որոշումը) ԱԺ մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածու առաջադրելու մասին և լիազոր ներկայացուցչի տվյալները ՏարԸՀ ներկայացվում են. ընտրության օրվանից ոչ շուտ, քան 75 և ոչ ուշ, քան 70 օր առաջ, մինչև ժամը 18.00-ն	2012թ. հոկտեմբերի 10-ից մինչև 2012թ. հոկտեմբերի 14-ը` ժամը 18.00	Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) մշտապես գործող մարմին	

1	2	3	4	5
5.	<p>Քաղաքացին ՏարԸՀ ներկայացնում է դիմում Ազգային ժողովի պատգամավորության թեկնածու ինքնառաջադրվելու մասին և երկու լիազոր ներկայացուցչի տվյալները՝ նոտարական կարգով վավերացված.</p> <p>ընտրության օրվանից ոչ շուտ, քան 75 և ոչ ուշ, քան 70 օր առաջ, մինչև ժամը 18.00-ն</p>	<p>2012թ. հոկտեմբերի 10-ից մինչև 2012թ. հոկտեմբերի 14-ը՝ ժամը 18.00</p>	<p>ԼՂՀ քաղաքացի կամ նրա լիազոր ներկայացուցիչ</p>	
6.	<p>ԱԺ մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածու առաջադրված քաղաքացիների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը ՏարԸՀ ներկայացվում են.</p> <p>Քվեարկության օրվանից ոչ ոչ ուշ, քան 45 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն</p>	<p>մինչև 2012թ. նոյեմբերի 8-ը՝ ժամը 18.00-ն</p>	<p>Կուսակցություն (կուսակցությունների դաշինք), ԼՂՀ քաղաքացի կամ նրա լիազոր ներկայացուցիչ</p>	
7.	<p>ԱԺ մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածու առաջադրված քաղաքացու գրանցումը կատարվում է.</p> <p>ընտրության օրվանից ոչ շուտ, քան 40 և ոչ ուշ, քան 35 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն</p>	<p>2012թ. նոյեմբերի 13-ից մինչև 2012թ. նոյեմբերի 18-ի ժամը 18.00-ն</p>	<p>Տարածքային ընտրական հանձնաժողով</p>	
8.	<p>ԱԺ մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուների նախընտրական քարոզչությունն իրականացվում է.</p> <p>թեկնածուների գրանցման համար նախատեսված վերջին օրվան հաջորդող օրը և ավարտվում է քվեարկությունից մեկ օր առաջ</p>	<p>2012թ. նոյեմբերի 19-ից մինչև 2012թ. դեկտեմբերի 21-ի ժամը 24.00-ն</p>	<p>ԼՂՀ քաղաքացիներ, կուսակցություններ (կուսակցությունների դաշինք)</p>	
9.	<p>Պատգամավորության թեկնածուի կամ իր լիազոր ներկայացուցչի անվամբ ԼՂՀ-ում գրանցված որևէ բանկում նախընտրական հիմնադրամ ստեղծվում է.</p> <p>թեկնածուի առաջադրման փաստը հավաստող տեղեկանքը ստանալու օրվանից</p>	<p>2012թ. հոկտեմբերի 10-ից</p>	<p>Թեկնածու կամ նրա լիազոր ներկայացուցիչ</p>	
10.	<p>Քարոզչական պաստառներ փակցնելու համար համայնքի տարածքում հատուկ տեղեր առանձնացվում են.</p> <p>ոչ ուշ, քան նախընտրական քարոզչությունն սկսվելուց 5 օր հետո</p>	<p>մինչև 2012թ. դեկտեմբերի 18-ը</p>	<p>Համայնքի ղեկավար</p>	
11.	<p>Թեկնածուներին գրանցելուց հետո, ըստ ներկայացված ցուցակների, վստահված անձանց տրվում են տեղամասերի թվի եռապատիկից ոչ ավելի կնքված վկայականներ.</p> <p>թեկնածուի կամ նրա լիազոր ներկայացուցչի հայտը ներկայացնելուց հետո 5-օրյա ժամկետում</p>	<p>սկսած 2012թ. նոյեմբերի 19-ից</p>	<p>Տարածքային ընտրական հանձնաժողով</p>	

1	2	3	4	5
12.	<p>Ընտրական տեղամասերը կազմավորվում են. <i>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 45 օր առաջ</i></p>	<p>մինչև 2012թ. նոյեմբերի 8-ը</p>	<p>Լիազոր մարմին, համայնքի ղեկավար, տարածքային ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչ</p>	
13.	<p>Տեղամասային կենտրոնները կազմավորվում են. <i>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 45 օր առաջ</i></p>	<p>մինչև 2012թ. նոյեմբերի 8-ը</p>	<p>Համայնքի ղեկավար</p>	
14.	<p>Ընտրական տեղամասերը տարածքային հանձնաժողովի որոշմամբ հաստատվում, համարակալվում, տեղամասային կենտրոնները նշվում, այդ տվյալները տեղական զանգվածային լրատվամիջոցներով հրապարակվում և կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացվում. <i>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 43 օր առաջ</i></p>	<p>ոչ ուշ, քան մինչև 2012թ. նոյեմբերի 10-ը</p>	<p>Տարածքային ընտրական հանձնաժողով</p>	
15.	<p>Տեղամասային կենտրոնի կազմավորման մասին քաղաքացիները և տեղամասային կենտրոնի տարածքը տնօրինող հաստատության ղեկավարը համայնքի ղեկավարի կողմից՝ հայտարարությունների միջոցով տեղեկացվում են. <i>տեղամասային կենտրոնի կազմավորումից հետո՝ երկօրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 43 օր առաջ</i></p>	<p>մինչև 2012թ. նոյեմբերի 10-ը</p>	<p>Համայնքի ղեկավար</p>	
16.	<p>Ընտրողների ցուցակները տեղամասային կենտրոնների տարածքները տնօրինող հաստատությունների ղեկավարներին տրամադրվում և տեղամասային կենտրոնում փակցվում են. <i>քվեարկության օրվանից առնվազն 40 օր առաջ</i></p>	<p>մինչև 2012թ. նոյեմբերի 13-ը</p>	<p>Լիազոր մարմին կամ նրա համապատասխան ստորաբաժանում, տեղամաս. կենտրոնի տարածքը տնօրինող հաստ. ղեկավար</p>	
17.	<p>Տեղամասային կենտրոնում փակցվում է տեղեկանք ընտրացուցակներում անճշտությունների վերաբերյալ դիմումներ տալու ժամկետների, տեղի, քննարկման կարգի, ժամանակի և պայմանների մասին. <i>քվեարկությունից 40 օր առաջ</i></p>	<p>2012թ. նոյեմբերի 13-ին</p>	<p>Լիազոր մարմին կամ նրա համապատասխան ստորաբաժանում</p>	

1	2	3	4	5
18.	<p>Քաղաքացիների կողմից ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտութ-յունները վերացնելու, քաղաքացու կողմից ընտրողների ցուցակում ընդգրկվելու կամ ընտրողների ցուցակից դուրս գալու մասին դիմում ներկայացվում է.</p> <p>համայնքի ղեկավարին՝ քվեարկության օրվանից մինչև 7 օր առաջ. ոստիկանության բաժին՝ քվեարկության օրվանից ոչ ուշ, քան մինչև 5 օր առաջ</p>	<p>մինչև 2012թ. դեկտեմբերի 16-ը</p> <p>մինչև 2012թ. դեկտեմբերի 18-ը</p>	<p>Համայնքի ղեկավար, լիազոր մարմին կամ նրա համապատասխան տարածքային ստորաբաժանում</p>	
19.	<p>Տեղամասային ընտրական հանձնաժողովները կազմավորվում են.</p> <p>քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 26 և ոչ ուշ, քան 23 օր առաջ՝ մինչև ժամը 18:00-ն</p>	<p>2012թ. նոյեմբերի 27-ից մինչև 2012թ. նոյեմբերի 30-ը՝ ժամը 18:00-ն</p>	<p>Տարածքային ընտրական հանձնաժողով</p>	
20.	<p>Տեղամասային ընտրական հանձնաժողովների առաջին նիստերն անցկացվում են.</p> <p>հանձնաժողովի կազմավորման հաջորդ օրը՝ ժամը 12:00-ին</p>	<p>2012թ. նոյեմբերի 28-ից մինչև 2012թ. դեկտեմբերի 1-ը, ժ. 12:00-ին</p>	<p>Տարածքային ընտրական հանձնաժողով</p>	
21.	<p>Թեկնածուն իրավունք ունի հանել իր թեկնածությունը.</p> <p>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ</p>	<p>մինչև 2012թ. դեկտեմբերի 13-ը</p>	<p>Թեկնածուներ</p>	
22.	<p>Ընտրողների թվի մասին ըստ ընտրատարածքների և ընտրական տեղամասերի տարածքային ընտրական հանձնաժողովին տրամադրվում է տեղեկանք.</p> <p>քվեարկության օրվանից 10 օր առաջ և 3 օր առաջ</p>	<p>2012թ. դեկտեմբերի 13-ին, դեկտեմբերի 20-ին</p>	<p>Լիազոր մարմին</p>	
23.	<p>Քվեաթերթիկները թողարկվում են.</p> <p>քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 9-ը և ոչ ուշ, քան 3 օր առաջ</p>	<p>2012թ. դեկտեմբերի 14-ից մինչև 2012թ. դեկտեմբերի 20-ը</p>	<p>Կենտրոնական ընտրական հանձնաժողով</p>	
24.	<p>Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները տարածքային ընտրական հանձնաժողովին հանձնվում են.</p> <p>քվեարկությունից ոչ շուտ, քան 5 և ոչ ուշ, քան 3 օր առաջ</p>	<p>2012թ. դեկտեմբերի 18-ից մինչև 2012թ. դեկտեմբերի 20-ը</p>	<p>Կենտրոնական ընտրական հանձնաժողով</p>	

1	2	3	4	5
25.	<p>Ընտրողների վերջնական ցուցակները՝ ըստ տեղամասերի և տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները՝ տպագրված 2 օրինակից (ընտրողների ցուցակների 1-ին օրինակը՝ կազմված մատյանի ձևով, 2-րդ օրինակը՝ տեղամասային կենտրոնում փակցնելու համար), ինչպես նաև ընտրողների լրացուցիչ ցուցակներ կազմելու համար անհրաժեշտ ձևաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին տրամադրվում են.</p> <p><i>քվեարկության օրվանից 2 օր առաջ</i></p>	2012թ. դեկտեմբերի 21-ին	Լիազոր մարմին կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավար	
26.	<p>Ընտրողների վերջնական ցուցակի օրինակը տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է.</p> <p><i>քվեարկության օրվանից 2 օր առաջ</i></p>	2012թ. դեկտեմբերի 21-ին	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ	
27.	<p>Քվեարկության սենյակը կահավորվում է.</p> <p><i>քվեարկությունն սկսվելուց առնվազն 24 ժամ առաջ</i></p>	մինչև 2012թ. դեկտեմբերի 22-ի ժամը 08:00-ն	Համայնքի ղեկավար, տեղամասային ընտրական հանձնաժողով	
28.	<p>Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին քվեաթերթիկները և կնիքների փաթեթները հանձնվում են.</p> <p><i>քվեարկության նախորդ օրը</i></p>	2012թ. դեկտեմբերի 22-ին	Տարածքային ընտրական հանձնաժողով	
29.	<p>Տեղամասային ընտրական հանձնաժողովին հանձնված բոլոր քվեաթերթիկները ստորագրվում են.</p> <p><i>քվեարկության նախորդ օրը մինչև ժամը 24:00-ն</i></p>	2012թ. դեկտեմբերի 22-ին մինչև ժամը 24:00-ն	Տեղամասային ընտրական հանձնաժողով	
30.	<p>Քվեարկության օրը տեղամասային կենտրոնում տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստը սկսվում և վիճակահանությունն անցկացվում է.</p> <p><i>քվեարկության օրը՝ ժամը 07:00-ին</i></p>	2012թ. դեկտեմբերի 23-ին ժամը 07:00-ին	Տեղամասային ընտրական հանձնաժողով	
31.	<p>Ք վ ե ա ր կ ու թ յ ու ն ը</p> <p><i>քվեարկության օրը՝ ժամը 8.00-ից մինչև 20.00-ն</i></p>	2012թ. դեկտեմբերի 23-ին ժամը 08:00-ից մինչև 20:00-ն	Տեղամասային ընտրական հանձնաժողով	

1	2	3	4	5
32.	<p>Տեղամասային ընտրական հանձնաժողովը 3-ժամյա պարբերականությամբ քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի մասին տվյալներ է հաղորդում տարածքային ընտրական հանձնաժողովին, վերջինս՝ ԿԸՀ-ին.</p> <p>քվեարկության օրը</p>	<p>2012թ. դեկտեմբերի 23-ի ժամը 11.00-ից մինչև 20.00-ն</p>	<p>Տեղամասային, տարածքային և կենտրոնական ընտրական հանձնաժողովներ</p>	
33.	<p>Տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը հրապարակվում է.</p> <p>ոչ ուշ, քան քվեարկության ավարտից 10 ժամ հետո</p>	<p>2012թ. դեկտեմբերի 24-ին մինչև ժամը 06:00-ն</p>	<p>Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ</p>	
34.	<p>Փաթեթավորված ընտրական փաստաթղթերը, քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների երկու օրինակը, գործավարության մատյանը, կնիքը և քվեատուփը տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում են.</p> <p>քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում</p>	<p>2012թ. դեկտեմբերի 24-ին մինչև ժամը 08:00-ն</p>	<p>Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ և քարտուղար</p>	
35.	<p>Տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների տվյալների հիման վրա ՏարԸՀ-ում ընտրությունների նախնական արդյունքներն ամփոփվում են.</p> <p>քվեարկության հաջորդ օրը՝ մինչև ժամը 14.00-ն</p>	<p>մինչև 2012թ. դեկտեմբերի 24-ը՝ ժամը 14.00-ն</p>	<p>Տարածքային ընտրական հանձնաժողով</p>	
36.	<p>Վերահաշվարկի պահանջի մասին դիմումները տարածքային ընտրական հանձնաժողովում ընդունվում են.</p> <p>քվեարկության հաջորդ օրը՝ մինչև ժամը 14.00-ն</p>	<p>մինչև 2012թ. դեկտեմբերի 24-ը՝ ժամը 14.00-ն</p>	<p>Տարածքային ընտրական հանձնաժողով</p>	
37.	<p>Տարածքային ընտրական հանձնաժողովը ընտրությունների արդյունքներն ամփոփում, արձանագրությամբ վավերացնում, հրապարակում և ուղարկում է ԿԸՀ.</p> <p>քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում (խսկ դատարանում կամ ՏարԸՀ-ում բողոք լինելու դեպքում քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 5 օր հետո)</p>	<p>մինչև 2012թ. դեկտեմբերի 25-ի ժամը 20:00-ն (մինչև 2012թ. դեկտեմբերի 28-ի ժամը 20:00-ն)</p>	<p>Տարածքային ընտրական հանձնաժողով</p>	
38.	<p>Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները կենտրոնական ընտրական հանձնաժողով վերադարձվում են.</p> <p>քվեարկության ավարտից 24 ժամ հետո</p>	<p>մինչև 2012թ. դեկտեմբերի 24-ի ժամը 20.00-ն</p>	<p>Տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ</p>	

1	2	3	4	5
39.	<p>Տարածքային ընտրական հանձնաժողովում վերահաշվարկի աշխատանքներն իրականացվում են.</p> <p><i>քվեարկության օրվանից 2 օր հետո՝ ժամը 9.00-ից մինչև քվեարկության օրվանից 5 օր հետո՝ ժամը 14.00-ն</i></p>	<p>2012թ. դեկտեմբերի 25-ին, ժամը 09.00-ից մինչև 2012թ. դեկտեմբերի 28-ի ժամը 14.00-ն</p>	<p>Տարածքային ընտրական հանձնաժողովներ</p>	
40.	<p>Տեղամասային ընտրական հանձնաժողովը ֆինանսական միջոցների ծախսման վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում տարածքային ընտրական հանձնաժողով.</p> <p><i>ընտրությունների ավարտից հետո 10-օրյա ժամկետում</i></p>	<p>մինչև 2013թ. հունվարի 2-ը</p>	<p>Տեղամասային ընտրական հանձնաժողով</p>	
41.	<p>Տարածքային ընտրական հանձնաժողովը ֆինանսական միջոցների ծախսման վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում ԿԸՀ.</p> <p><i>ընտրությունների ավարտից հետո 20-օրյա ժամկետում</i></p>	<p>մինչև 2013թ. հունվարի 12-ը</p>	<p>Տարածքային ընտրական հանձնաժողով</p>	
42.	<p>Թեկնածուները ԿԸՀ-ին ներկայացնում են հայտարարագիր իրենց հիմնադրամի միջոցներն օգտագործելու մասին.</p> <p><i>ոչ ուշ, քան ընտրության ավարտից 6 օր հետո</i></p>	<p>մինչև 2012թ. դեկտեմբերի 29-ը</p>	<p>Թեկնածուներ</p>	

ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար՝

Ռ. Նազարյան